

Ճակատագրեր

Մայրական բնագոյն ուժ տվեց նրան



Ղեռնոր կյանք մտած՝ երջանիկ ամուսնական զույգը բաժանվեց ընդմիջտ, առհավետ... Չոհիված ազատամարտիկ էղվարդ Սուբոյանի երիտասարդ այրին՝ Ֆլորան, մեն-մենակ մնաց երկու դուստրերի հետ: Մութ ու ցուրտ տարիներին, հաղթահարելով հոգու կսկիծը, ֆիզիկական դժվարությունները, նա ստիպված էր ամեն օր քայլել 4 կմ՝ աշխատանքի վայր հասնելու համար, որպեսզի կարողանա ապահովել իր ընտանիքի գոյությունը: Ծանր հոգսերը բազմիցս հուսահատության են հասցրել նրան, սակայն դուստրերին մեծացնելու փափագը, մայրական բնագոյն ուժ են տվել նրան կրկին պայքարելու... Այսօր նրանք երկուսն էլ բարձրագույն կրթություն ունեն...

Երջանկությունը՝ մորս զոհողության գնով

...Հայրս ամեն օր դաժանաբար ծեծում էր մորս, և նա ամեն առավոտ արցունքն աչքերին էր տնից դուրս գալիս: Հուսով եմ, որ կգա ժամանակ, և այդ չարաբաստիկ խմիչքն իսպառ կվերանա երկրի երեսից... Ամեն տողը գրելիս ինձ թվում է, թե քիչ է, այնքան շատ էին մորս տառապանքները... Այն ցավը, որ կա իմ հոգում, երբեք չի անցնի, բայց ես հպարտ եմ, որ իմ մայրը մեզ համար եղել է և՛ մայր, և՛ հայր: Աշխատել է օր ու գիշեր, պահել-մեծացրել է մեզ, կրթության է տվել, ամուսնացրել...

Այսօր նա ունի յոթ թոռնիկ, որոնց թիվը դեռ կավելանա: Ինձ թվում է, որ նա երջանիկ պիտի լինի՝ իր կողքին ունենալով հարազատ մարդկանց, ովքեր գնահատում ու սիրում են իրեն: Բոլորս էլ գիտակցում ենք, որ մեր երջանկությունը ծեռք է բերվել մորս զոհողության գնով:

Իսկ հայրս մահացավ: Ու հիմա իմ սիրտը ցավում ու լացում է նաև նրա համար, որովհետև մեզանից ու ամեն ինչից վեր դասեց խմիչքը ու այդպես էլ չհասկացավ, որ կյանքում ավելի վեհ բաներ կան...

Մեղա տատիկը



Երբ տղաս ծ ա ո շ ա յ ու թյունից վերադարձավ, երազա մքս էր ամուսնացնել նրան, ուզում էր շատ թոռնիկներ ունենալ... Տունս փոքր էր, յոթ հոգով՝ աղջիկներս ու տղաս, մի սենյակում էինք ապրում: Որպեսզի ապագա հարսն չհեղձի, աղջիկներին շտապում էի ամուսնացնել, առանց երկար ծանրութեթև անելու: Նրանցից ոչ մեկն ընտանեկան երջանկություն այդպես էլ չտեսավ: Ինձնից էլ ճակատագիրը կարծես երես թեթեց: Շատ լարված հարաբերությունների մեջ էինք հարսիս հետ: Երբ պատերազմն սկսվեց, տղաս, չկարողանալով հանդուրժել իմ և հարսիս ընդհարումները, կամավոր գրվեց: Մի ամբողջ տարի ահր սրտունս սպասում էի... Երիշտ է, որդիս առիթը բաց չէր թողնում տուն գալ, բայց... Տղաս սպանվեց, նա նույնիսկ չհասցրեց տեսնել իր տղային, ընդամենը երկու ամսից ծնված թոռնիկիս՝ Յուրային: Հարսս չդիմացավ այդ ծանր հարվածին և հիվանդացավ, հիմա լուրջ հոգեկան խնդիրներ ունի...

Այսօր ես խնամում եմ թոռներին ու ծոռներին...
«Հուսալի ծեռքեր» խմբի անդամների գրի առած պատմություններից, ք. Իջևան

Մեր և քաղաքականությունը

«Չեմ գարնանա, որ մի գեղեցիկ օր աղջիկս գա և ասի. «Ման, գնում եմ Նայրոբի՝ սոված երեխաներին օգնելու»...»



Էջ 3

2011 մարտ

Անվճար հավելված



...Նրա հիշողություններում ժամանակն ասես հավերժ է ձգվում: Ընտանեկան ալբոմի վերջին էջը փակելով՝ նկատում է. «Իսկական կինը երեք տարիք է ունենում՝ երիտասարդություն, որը նրա սեփական կյանքի սկիզբն է, երկրորդ երիտասարդություն՝ դատեր ծնունդը, և հավերժական երիտասարդություն՝ թողոք, որն անպայման իր մեջ կպահպանի տատի գծերը»...
Շարունակությունը 2-րդ էջում



«Մեր տան հացն է մայրս, մեր տան ասրվածն է մայրս...»

Դժվար է պատկերացնել հայ մայրերի կամքն ու ոգին ներկայացնելու ավելի լավ առիթ, քան ապրիլի 7-ը՝ մայրության և գեղեցկության օրը:

Այս թողարկման հիմքում ընկած գաղափարը «ՕՔՄՖԱՄ ՄԲ» կազմակերպության կողմից «Կանանց երեք սերունդ» թեմայով անցկացված մրցույթն է: Այն հնարավորություն տվեց վերագտնել նաև այն տրամաբանությունը, որ միավորում է կանանց երկու տոները՝ մարտի 8-ն ու ապրիլի 7-ը: Իսկ տրամաբանությունն այն է, որ մայրերը, որոնք, ինչպես հայտնի հայկական ասացվածքն է ասում, «տան ներսի պատն են», նույն հաջողությամբ կարող են օգնել «դրսի պատերը պահելուն», այսինքն՝ մասնակցեն իրենց երկրի հասարակական-քաղաքական կյանքին, իրենց ընտանիքների բարեկեցության վրա ազդող որոշումների ընդունմանը... Ու գուցե այդ ժամանակ՝ կանանց ու տղամարդկանց միասնական ջանքերով, մեր կյանքը վերջապես կփոխվի, այլ որակ կստանա...

«ՕՔՄՖԱՄ»-ի հայաստանյան գրասենյակի կողմից Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցում (www.cspn.am) մարտի 8-ից ապրիլի 7-ը հայտարարված «Կանանց երեք սերունդ» մրցույթը կոչված էր ներկայացնել հայ կանանց ուժն ու տոկոսությունը... Կանանց, ովքեր անհավատալի ջանքերի գնով պահպանել ու պահպանում են ընտանեկան և ազգային արժեքները, ովքեր մեկ անգամ չէ, որ իրենց գավակներին փրկել են ցրտից ու քաղցից, սովորեցրել նրանց դիմանալ, պայքարել և հաղթահարել բոլոր դժվարությունները...

Այս համարում գետնից բլուր պատմությունները հասարակ, գուցե քիչ հայտնի, բայց

շատ ուժեղ կանանց մասին են: Այդ կանանց մեծ մասն ուժ է ծեռք բերել մեր երկրում «ՕՔՄՖԱՄ ՄԲ»-ի իրականացրած գործունեության շնորհիվ, նրանք «Կայուն կենսակերպի ապահովման և գյուղատնտեսական աջակցության», «Կանանց դերը և ծայր կառավարման գործընթացում», «Աղետների ռիսկի նվազեցման» և այլ ծրագրերի շահառուներն ու մասնակիցներն են:

Նրանցից ոմանք օգտվել էին հեռավոր գյուղական համայնքների անապահով ընտանիքներին, ֆերմերներին տրամադրվող միկրովարկերից և փորձել իրենց փոքր գյուղատնտեսական բիզնեսը զարգացնել կամ էլ վաճառել այն, ինչ պատրաստել են իրենց հմուտ ծեռքերով: Մյուսները տնկանյութեր, սերմեր և ընտանի կենդանիներ են ստացել իրենց ընտանիքի գոյատևումն ապահովելու նպատակով: Մի մասն էլ կարողացել է ոտքի կանգնել՝ օգտվելով մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություններից: Նրանցից շատերը սովորեցին նաև իրենց իրավունքների համար պայքարել, տեղական իշխանության մակարդակում իրենց խնդիրները բարձրացնել ու լուծել, քաղաքացիական կենտրոնների և կանանց շահերի պաշտպանության խմբերի անդամներ դարձան: Ու այս բոլոր ծրագրերի առաջին գծում իրենց գավակների պայքարով մտահոգ մայրերն են:

Ցավոք, այսօր էլ՝ 21-րդ դարում, քաղցի ու աղքատության խնդիրը մակիկի պես սպառնում է աշխարհին, և բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ «ՕՔՄՖԱՄ»-ը, էլքեր են փնտրում՝ ինչպես օգնել մարդկանց ապրելու քաղցի, կլիմայի փոփոխության, խմելու ջրի պակասի պայմաններում... Հայաստանն այդ առու-

նով նույնպես խոցելի է, քանզի չի դասվում սոցիալապես բարեկեցիկ երկրների շարքը, որոնց ծայրահեղ աղքատության և սովի խնդիրը շրջանցում է: Այս մասին են վկայում պաշտոնական վիճակագրության տվյալները, որոնց համաձայն այսօր Հայաստանում յուրաքանչյուր երրորդ մեծահասակ և գրեթե յուրաքանչյուր երկրորդ երեխա ապրում են աղքատության մեջ: Մի կերպ իրենց գոյությունն են պահպանում համարյա բոլոր բազմանդամ ընտանիքները. ավաղ, մեր երկրում աղքատ ու բազմազավակ հասկացությունները հոմանիշ են դարձել:

Բացի այդ, այսօր Հայաստանում ընտանիքների 1/3-ից ավելին գլխավորում են կանայք, ինչն ամենևին էլ պայմանավորված չէ կանանց ենթսիպացիայով կամ նրանց կարիերային հաջողություններով: Այս երևույթն աղքատության և տղամարդկանց արտագաղթի հետևանք է: Ավելորդ է մշել, որ նման ընտանիքներում մեկ շնչին ընկնող եկամուտը կրկնակի պակաս է, քան լրիվ ընտանիքներում:

...Այս համարում առաջնահերթությունը տալով հողվածներին, որոնք գրվել են Հայաստանում «ՕՔՄՖԱՄ» կազմակերպության ծրագրերի մասնակիցների կողմից կամ պատմում են դրանց ծրագրերի շահառուների մասին, գետնից ենք նաև երեք սերունդի կանանց յուրահատուկ պատմություններ, ում ճակատագրին միջամտել են ցեղասպանությունը, գաղթը, քաղցը, բռնաճնշումները, պատերազմները... Դրանցում ինչպես հայելու մեջ արտացոլված է ողջ հայ ժողովրդի պատմությունը, բայց ոչ դասագրքայինը, այլ այն, որ հայ կանայք խնամքով պահում են ընտանեկան ալբոմներում...

Երեք սերունդի կանայք

«ՕՔՄՖԱՄ ՄԲ» հայաստանյան գրասենյակի կողմից հայտարարված «Կանանց երեք սերունդ» մրցույթի հաղթողների մասին կարող եք տեղեկանալ Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի կայքից՝ www.cspn.am

«Կինը և քաղաքականությունը» հավելվածը շարունակելու է «Կանանց երեք սերունդ» թեմայով իրական պատմությունների տպագրումը: Այնպես որ ուղարկեք մեզ ձեր պատմությունները հետևյալ էլեկտրոնային հասցեով: promediagender_arm@yahoo.com



Կանանց ձայնը

Համոզված եմ, որ կարող եմ



29 տարեկան եմ, ապրում եմ Սիսիան քաղաքում, երջանիկ և սիրված կին եմ և հոգատար մայր: Ամեն ինչ իդեալական կլիներ, եթե չլիներին համատարած գործազրկությունը և ծանր տնտեսական վիճակը: Ես շատ եմ ցանկանում օգնել անուսուցյալ: չէ՞ որ մի ձեռքը ծափ չի տա: Կրթությամբ նկարիչ-դիզայներ եմ, հարակից ուսանել եմ ֆլորիստիկա, ասեղնագործություն, ուլունքագործություն, մրգերի դիզայն: Անվճար հիմունքներով համագործակցել եմ քաղաքի դպրոցների և մանկապարտեզների հետ, մասնակցել եմ նաև երկու ցուցահանդեսի: Ցավոք, իմ այս գործունեությամբ չեմ կարողանում ֆինանսապես օգնել ընտանիքիս: Բայց չեմ հուսահատվում, անընդհատ ստեղծագործում եմ և սպասում այն օրվան, որը ճանաչում ու զնահատանք կբերի ինձ: Մտածում եմ՝ գուցե «ՕԲՄՖԱՄ»-ի ծրագրերի շրջանակներում կծանոթանամ տարբեր երկրների կին ստեղծագործողների հետ և պատվերներ կունենամ այլ վայրերից:

Մի քայլ առաջ դեպի իմ երազանքը

Ապրում եմ Սիսիան քաղաքում: Ծնվել և մեծացել եմ ավանդապաշտ և բազմամյա ընտանիքում: Ծակատարի կամոք շուտ անուսուցյալ և դարձա գաղթի թողնողն անցած հայրենադարձ հաշտարյանների ընտանիքի մի մասը: Չկարողացա կրթություն ստանալ, քանի որ պատերազմ էր, սոցիալական ծանր վիճակ, «մուս ու ցուրտ» տարիներ: Երկու զավակ ունեցանք և, ինչպես բազմաթիվ հայ ընտանիքներ, հաղթահարելով ծանր տնտեսական պայմանները, մեծացրինք երեխաներին: Ցավոք, համատարած գործազրկությունը հնարավորություն չի տալիս ինձ և իմ ընտանիքի անդամներին աշխատանք ունենալ: Սկսեցի սովորել խմորեղեն պատրաստել, և ժամանակի ընթացքում պարզվեց՝ այնքան համեղ է, որ շատերը նախընտրում են միայն իմ պատրաստածը: Ես շատ եմ ցանկանում փոքրիկ բիզնես կազմակերպել, սակայն այդ գործը սկսելու համար նվազագույն, անհրաժեշտ պայմաններ չունեմ, մյուս կողմից էլ՝ հարկերն ու վարկերը սարսափելի են: Մեծ ոգևորությամբ հետևում եմ «ՕԲՄՖԱՄ» կազմակերպության գործունեությանը մեր քաղաքում: Այնպիսով եմ, որ իրականացվող ծրագրերի շրջանակներում գուցե փոքրիկ վարկեր լինեն, որոնք հնարավորություն կտան ինձ փոքրիկ բիզնես կազմակերպելու:

Գրի առավ Գայանե Սիմոնյանը, Սիսիանի կանանց հիմնախնդիրներով զբաղվող նախաձեռնող խմբի անդամ

Կին, որ միշտ հենված է հողին հայրենի



Կյանքում երբեք փառքի չի ձգտել, փոխարենը բարի լույսի պես ջերմությամբ է լցրել իրեն շրջապատող ու վստահող սրտերը, մեղ օրերին սատարել նրանց: Եվ լցրել էլ է պահը զոհողության, նա առաջինն է զինվորագրվել հայրենի պաշտպանությանը:

Ոսկեպար «սահմանապահ» համայնքի ղեկավար Հրուշ Աղբալյանին ամբողջ հանրապետությունում գիտեն: Նրան միշտ լրջախոհ կտեսնես, մտորումների մեջ, զգաստ, ինչպես հրամանատարը, այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի ամենասահմանապահ գյուղի զլխավոր պահապանն է: «Սահմանը մերն է, ու առաջին հերթին մեր աշխատանքով այն պիտի ամուր պահենք», - ասում է նա: Իր օրինակելի աշխատանքի շնորհիվ է, որ յուրաքանչյուր խոսք վերածվում է գործի. «Սեր կարևոր հիմնախնդիրը՝ ոռոգման ջրի լուծումը, շուտով կկարգավորվի, ու մարդիկ կրկին հողին կկապվեն: Այդժամ ես ինձ երջանիկ կզգամ», - ասում է համայնքի ղեկավարը:

...Ուրախանում է Հրուշ Աղբալյանը, վերջին տարիների համեմատությամբ գյուղում ծնելիության աճ է գրանցվել՝ 16 ծնունդ, իսկ սա հուսալուրդ ցուցանիշ է...

Տաթևիկ Նազինյան

«Իսկական կինը երեք տարիք է ունենում»

Մարգո Ատոմյանի հիշողություններում ժամանակն ասես հավերժ է ձգվում: Միասին թերթում ենք ընտանեկան այլոքը...

Լուսանկարում պատկերված գեղեցկադեմ ու շքեղ կինը Մարգոյի մայրն է՝ Նվարդը: Երբ 1915-ին նրանց ընտանիքը, իրերը կապկպելով, ստիպված էր փախչել, ճանապարհին նրանց է հասնում թուրքական տարագրվ մի ձիավոր: Նժույգից կտրուկ թեքվելով բռնում է գեղեցկուհի Նվարդի ձեռքը: Բոլորը մտածում են, որ սա վերջն է: Սակայն հանկարծ նրա ուշադրությունն է գրավում կնոջ ձեռքի աղամանդե մատանին: Կոպտորեն պոկելով այն մատից նա հեռանում է... Հսկայական տարածություն կտրելով, գրկաբերելի ու բաղնիք ենթարկվելով՝ Նվարդի ընտանիքը հաստատվում է Լեմինգրադում: Սակայն հայրենիք վերադառնալու ցանկությունն այնքան ուժեղ էր, որ այն ժամանակի ընթացքում նյութականացավ. Նվարդը ծանոթանում է Քևորգի հետ, ամուսնանում, և շուտով երջանիկ գյուղը վերադառնում է Հայաստան:

Այստեղ էլ՝ Երևանում, ծնվեց նրանց առաջնեկը՝ Մարգոն: Նա հազիվ 12 տարեկան էր, երբ սկսվեց Մեծ Հայրենականը, և Քևորգը մեկնեց ռազմաճակատ: Մեկնեց ընդմիջտ... Նվարդը, ենթագիտակցորեն վախենալով թուրքերի հարձակումից, որոշեց փախչել Հայաստանից: Մեկնեց Լեմինգրադ՝ մտքով իսկ չանցկացնելով, թե ի՞նչ վտանգի է ենթարկում իրեն ու դստերը...

Համատարած սովի և ավերածությունների պատկերներից բացի Մարգոյի մանկական հիշողություններում ամենից շատ տպավորվեց այն օրը, երբ դպրոցի վրա ռումբ ընկավ. ամենուրեք ընկած են դիակներ, իսկ մայրը վախից խելահեղ աչքերով, թափված


մազերով վազում է դպրոցի կողմը, որից միայն ավերակներ էին մնացել: Իսկ նա գրկախառնվելով ապրումներից ու ժասպառ մորը՝ անընդհատ կրկնում է. «Մամ, ես ողջ եմ, ողջ եմ»...

...Ահա Մարգոն Լեմինգրադի բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի: Այստեղ է, որ ծանոթացավ նշանավոր բանդակագործ Դերենիկ Դանիելյանի որդու՝ Արամի հետ: Մեկ տարուց նրանք ամուսնացան և որոշեցին վերադառնալ Հայաստան: Մարգոն ամեն կերպ փորձում էր մորը համոզել իր հետ Երևան մեկնել, սակայն վերադարձը դժվարությունները Նվարդին ընդմիջտ կապեցին Լեմինգրադի հետ...

Երևանում Մարգոն իսկույն աշխատանք գտավ: Ազատ տիրապետելով հայերենին ու ռուսերենին՝ որոշեց թարգմանությամբ զբաղվել. հայերեն թարգմանեց Կուպրին, ապա՝ Դուստոևսկի... հետո էլ ռուսերեն էր թարգմանում Տերյան, Իսահակյան... Ինքն էլ սկսեց ուսանավորներ գրել: «Երբ նեղվում եմ, գրում եմ, որ թեթևամեծ», - խոստովանում է նա:

Կյանքը ամուսնու տանը թեթև էր, եթե չհաշվենք հիվանդ սկեսրոջը, որին նա գիշեր-ցերեկ խնամում էր: Երբ ազատ ռուսեր էր ունենում, գնում էր սկեսրայրի Դերենիկի արվեստանոց և հետևում, թե նա ինչպես է աշխատում: Իսկ մի անգամ բոլորը նկատեցին, որ Դերենիկի բանդակագործ Տիրամայրը Մարգոյի դիմագծերն է հիշեցնում: Աստվածամոր գրկում մտած չքնաղ մամուկը Մարգոյի նման նշանակալից էր: «Դու տղա կունենաս», - հայտարարեց սկեսրայրը՝ ավարտելով բանդակը: Մարգոյի կամար միևնույն էր, թե ով կանգնեց տղա՞, թե՞ աղջիկ: Նա միայն գիտեր, որ իր երեխան արվեստի մարդ կդառնա:

Մարգոն աղջիկ ունեցավ, ուն բնջռոներ կոչեցին Անու-



չիկ: Պապը, չնայած տղայի մասին իր մարգարեությանը, պարզապես պաշտում էր նրան:

Թվում էր՝ Մարգոյի կյանքում ամեն ինչ լավ էր, բայց ամուսինը Արամը, որը ստեղծագործական ճգնաժամում հայտնվելով սկսեց խմել, մի օր էլ հեռացավ տնից մի անհետք գրություն թողնելով. «Ես վերջացել եմ: Խնդրում եմ ինձ չանհանգստացնել»: Հետո Մարգոն իմացավ, որ Արամը հաստատվել է ինչ-որ տեղ Ամերիկայում, մույնիկ մոր ընտանիք է ստեղծել...

Անուշիկն օրեցօր ավելի էր գեղեցկանում: Հոր բացակայությունից նեղվելով՝ ավելի ու ավելի էր կապվում պապին: Ընդունվելով գեղարվեստի ակադեմիայի քանդակի ֆակուլտետ, փորձում էր իր սեփական ուղին գտնել արվեստում... 80-ականներին ակադեմիայի երիտասարդ մասնագետների հետ Մատենադարանի արժեքավոր ձեռագրերի վերականգնմանը մասնակցելով հասկացավ, որ դա իրենն է, այն, ինչ երկար ժամանակ փնտրում էր: Նրա հետ մանրակարգեր էր վերականգնում նաև համակուրսեցի Կահեն: Ու, ինչպես սովորաբար լինում է, հետաքրքրությունների ընդհանրությունը ի վերջո միմյանց համոզեց սիրո

հանգեցրեց... Հայաստանի շրջափակումը 90-ականների սկզբին երկրորդն էր Մարգոյի ընտանիքի պատմության մեջ: «Մենք ուժեղ ենք, մենք ամեն ինչին կդիմանանք», - գոտեպնդում էր աղջկան Լեմինգրադի բուկարայով անցած մայրը: Ցուրտ, չջեռուցվող բնակարանում, երբ օրը ընդամենը երկուական ժամով լույս էին տալիս, Անուշիկն ասես ճառագուն էր ներսից. նա հիղ էր... Այն օրը, երբ ծնվեց նրա Լարեն, մահացավ Նվարդ տատը...

Երբ լրացավ փոքրիկի ութ տարին, Անուշիկն ու ամուսինը մասնագիտական կատարելագործման առաջարկ ստացան և մեկնեցին Լեմինգրադ, որը, ի դեպ, արդեն Սանկտ Պետերբուրգ էր կոչվում: Մարգոն թռան հետ մնաց Երևանում:

...Փոքրիկ Լարեն լավ է նկարում և սիրով բացատրում է իր նկարածները: Հիմա էլ, կապույտ լճի վրայով սահող կարապ պատկերելով, մայրն է ինձ ու հարցնում. «Նման է, չէ՞, հեթիաթային կարապի»: «Շատ է նման», - ասում եմ ու հանկարծ նկատում, որ նրա աչքերը ինչ-որ տեղ արդեն տեսնում են: Դե, իհարկե... Աստվածամոր քանդակը մանկան հետ...

Կարի Ամիրխանյան

Մայրեր եւ դուստրեր

Երեք սերունդ, երեք կին, երեք կարծիք

Հարությունյանների ընտանիքը բաղկացած է երեք կանանցից. տան ավագը՝ Սոնյա տատիկը, նրա դուստրը՝ Հասմիկը, և ընտանիքի փոքրիկը՝ 18-ամյա Անին: Նրա պապիկը մահացել է տարիներ առաջ, իսկ հայրը հեռացել է ընտանիքից, երբ Անին դեռ 10 տարեկան էր: «Ես, կարելի է ասել, երբեք շատ չեմ նեղվել, որ տանը տղամարդ չկա, որովհետև սովորել եմ նրանց բացակայությամբ ապրել: Մամաս ու տատիս ինձ այնքան եմ սիրում ու օգնում, որ ես ինձ ուժեղ եմ զգում», - ասում է Անին:

Օրերն այս ընտանիքում հիմնականում համերաշխ են անցնում, սակայն բազմաթիվ հարցերի շուրջ տարբեր սերունդների ներկայացուցիչների հայացքները տարանջատվում են: Սոնյա, 64 տարեկան. «Թողնիկս հետ հաճախ եմ վիճում ու շատ ցայու համար: Ախր չի կարելի, նա դեռ երեխա է, ուսանող, կենձանա, կամուսանա, թող ամուսնու հետ ուր ուզում է գնա, երբ ուզում է գա»:

Անի, 18 տարեկան. «Օրվա ընթացքում այնքան գործ եմ ուզում անել, որ ժամանակը չի բավականացնում: Մինչև տուն եմ հասնում, ժամը տասն է լինում: Տատիսն էլ ասում է՝ հարևաններն ի՞նչ կմտածեն: Իսկ ինչո՞ւ պիտի հարևանները որևէ բան մտածեն իմ մասին: Պարսպ եմ մնացել: Թող ամեն մարդ իր կյանքով ապրի»:

Հասմիկ, 42 տարեկան. «Երբ տատ ու թոռ իրար հետ կռվում են, միշտ ես եմ տուժում: Ես փորձում եմ հաշտեցնել, որովհետև երկուսին էլ հասկանում եմ, երկուսի ասածն էլ ճշմարտությանը մոտ է: Բայց

արդյունքում ինձնից եմ նեղանում, երկուսն էլ ուզում են, որ իրենց պաշտպանեմ»:

Սոնյա տատիկն ասում է, որ իր երիտասարդության տարիներին կանայք միայն մեկ հոգս ունեին՝ ամեն ինչ անել «տանը չմնալու համար»: «Սեր ժամանակ առաջ-նայինը հաջող ամուսնությունն էր: Հաջող ամուսնություն ասելով՝ նկատի ունեմ, որ մարդն աշխատող լինե, խմող չլինե, չծեծեր, որ կեսուրն էլ բարի կին լինե, հարսին չծեծեր», - ասում է Սոնյա տատիկը:

Նրա դուստրը՝ Հասմիկը, այլ խնդիրներ է նշում. «Իմ սերնդակից կանայք ստիպված են և՛ տանը աշխատել, և՛ դրսում, որպեսզի պահեն իրենց ընտանիքը: Ամուսինը երբեք աշխատանքից հետո տուն գալով չի անցնի լվացքի, ճաշ էփելու և այլ գործերի, իսկ կանայք կանեն: Ինձ մայրս ու աղջիկս են օգնում, ես տանը այդքան էլ չեմ աշխատում, բայց շատ կանանց եմ ճանաչում, որ երկու ճակատում էլ ակտիվ են»:

Իսկ Անին հասկացել է, որ հույսը միայն իր վրա կարող է դնել. «Ես գիտեմ, որ շատ պիտի աշխատեմ, լավ սովորեմ, որ կարողանամ ինչ-որ հաջողության հասնել: Տղաներին ավելի հեշտ է կարիերա անել: Իսկ աղջիկը պետք է լավագույնը լինի, որ իրեն լավ աշխատանք առաջարկեն»:

Սոնյա տատիկը դժգոհում է, որ թող երկար ժամանակ է անցկացնում սոցիալական ցանցերում. «Մեկ-մեկ խոսում եմ վրան, ասում եմ՝ դասերից հետ կմնաս: «Օղնուկյանիկ» է մտնում ամեն օր, մորն էլ է գրանցել, հիմա մեր ու աղջիկ են մտնում համակարգի դիմաց: «Մանկության ընկերուհիս Բելգիայում

է ապրում, միայն նրա հետ եմ շփվում, թե չէ՛ ինտերնետից օգտվելու ուրիշ առիթ չունեմ», - «արդարանում» է Հասմիկը:

Իսկ Անին կարծում է, որ այսօր առանց համակարգչի գրեթե անհնարին է ապրել. «Կուրսեցիներս հետ եմ շփվում, դասերի մասին տեղեկություններ ենք իրար տալիս, օգնում ենք: Հիմա համակարգչի դար է, առանց հաղորդակցման հնարավոր չէ», - ասում է նա:

Երջանկության վերաբերյալ ևս երեք սերունդի ներկայացուցիչները կարծիքները տարբերվում են: «Կանացի երջանկությունն այն է, որ նորմալ ընտանիք ունենաս, առողջ երեխաներ, լավ ամուսին: Հաշտ ու խաղաղ ապրես: Ես ինձ եղ առու-մով երջանիկ եմ համարում, թեև ամուսինս 55 տարեկանում մահացավ», - սա 64-ամյա կնոջ «երջանկության բանալին» է:

Սեր ու հարգանք. սա էլ Հասմիկի պատկերացրած երջանկությունն է. «Ես բաժանվեցի ամուսնուցս, որովհետև նա ինձ չէր հարգում: Սիրում էր, բայց պատկերացում չուներ, թե հարգանքն ինչ է»:

18-ամյա Անին չի սիրում «կանացի երջանկություն» արտահայտությունը. «Երջանկությունը մարդկային է՝ անկախ սեռից: Ինձ համար երջանկությունը մի բանի քաղաքիչների առկայությունն է՝ աշխատանք, լավ ընկերներ, լավ ամուսին, ֆինանսական կայունություն: Ես ընդամենը 18 տարեկան եմ, բայց տատիս արդեն ակնարկում է, թե պիտի ինձ համար նորմալ տղա գտնեմ: Բայց ես չեմ շտապում: Դեռ շատ անելիքներ ունեմ», - կարծում է Անին:

Արման Ղարիբյան
7.9. - Կանանց անունները փոխված են:

Բարության տոհմածառ

«Մա՛ն, գնում եմ Նայրոբի՝ սոված երեխաներին օգնելու»

- Առավոտյան, սովորականի պես, ես ու քույրս դուրս եկանք տնից: Վարորդը եկել էր մեզ դպրոց տանելու: Մեքենայի մեջ գրեթե ոչ մի բան չհասցրեցինք, միայն պայմանավորեցինք, որ դասամիջոցին կհանդիպենք, բայց...

Տարիներ են անցել, սակայն այսօր էլ Ջարուհի Տոնոյանը արասափով է հիշում այդ օրը: - Ենթացիկ դուրս գալուս պես աչքերով քույրիկս էի փնտրում, հետո տեսա, թե ինչպես գինվորականները երեխաներին դպրոցից դուրս են հանում ու գետնին դնում՝ արյունոտված, անշարժ պառկած... Կարծես այդ պահին ուղեղդ անջատվում է. աչքիդ առաջ դեռ իջնում են շենքերը, կարծես ոչ թե քարե շինություններ են, այլ տակեր, խաղալիքի շենքեր... Դպրոցի բակում քառու էր: Գիշում եմ միայն, որ դեմքս լրիվ սպիտակել էր փոշուց, և բերանումս զգում էի հողի համր...

Ջարուհին պատահականություն է համարում թե՛ իր և թե՛ իր փոքր եղբոր ու տասնիկ փրկվելը, ովքեր տանն էին եղել այդ պահին, և շենքի մյուս հատվածն էր փլվել:

- Դպրոցը երկու մուտք ուներ, ես պարզապես դուրս եկա այն հատվածով, որն այդ պահին ավելի մոտ էր, այլապես...

Ջարուհու մայրը՝ Անահիտ Ղազարյանը, մասնագիտությամբ բժիշկ է, այդ տարիներին աշխատում էր տեղի հիվանդանոցում, կոնսուլտացիայի վարիչ էր, հայրը՝ Մարտին Տոնոյանը, Ախուրյանի շրջկոմի նախագահն էր:

- Երանք այդպես էլ ոչ մի պահ չհեռացան Լեւոհիմնականից: Երանուհուն էին աշխատել, օգնել մարդկանց և դրա մեջ գտնել ամեն ինչ: Մի պահ մենք նույնիսկ մեզ անտեսված էինք զգում: Կարծես Նայրոբի կորուստը սառեցրել էր նրանց... Ջարուհին եղբոր և տասնիկի հետ տեղափոխվում է Երևան՝ մորաքրոջ մոտ, սակայն մի քանի ամիս հետո կրկին վերադառնում է Լեւոհիմնական և անցնում բոլոր դժվարությունների միջով՝ տնակային պայմաններ, ցուրտ, հացի, վառելիքի խնդիր...

Այդ տարիներին է, որ Ջարուհին ընդունվում է բուհ, և երկրորդ կուրսից զուգահեռաբար սովորե-

լով աշխատում Գյուճրում մարդասիրական ծրագրեր իրականացնող Care միջազգային կազմակերպությունում՝ արեւմտից տուժած տարածքներ այցելելով, մասնակցելով հունանիտար օգնության բաշխմանը...

Յետո էլ դիմում է Ամերիկյան համալսարան, այնուհետև ուսումը շարունակում է ԱՄՆ-ում՝ «Մասկի» ծրագրի շրջանակներում: Վերադառնալով Հայաստան՝ Ջարուհին շարունակում է աշխատել միջազգային կազմակերպություններում, որոնք մարդասիրական գործունեություն են ծավալում Հայաստանում. Կարմիր խաչ, Կաթոլիկ օգնության ծառայություն, «Եվրասիա», «Վորլդ Վիժն»...

- Մի պահ փորձեցի ինձ նաև բիզնես ոլորտում, «ԲիԼայն» ընկերությունում, սակայն հասկացա, որ դա ինձ չէ, որ առանց մարդկանց հետ անմիջական շփման ուղղակի չեմ կարող... Գուցե երկրաշարժի ժամանակ վերապրած անգործության զգացումն ինձ մեջ մարդկանց օգնելու հստակ պահանջ ձևակորեց, բայց ավելի ճիշտ ուզում էի միշտ ծնողներին նմանվել:

Ինչքան ինձ հիշում են, տատիկս է մեզ պահել, ծնողներս միշտ զբաղված են եղել, մարդկանց են օգնել, մայրս կոնսուլտացիաներ էր տալիս, կարող էին գիշերը գալ, տանել՝ ծնունդ ընդունելու... Գիշում եմ՝ մի անգամ ուշ գիշեր էր, հայրս ներս մտավ և ասաց, որ մայրս չորեք պատրաստի, գաղթականներ ունենք, հագուստի կարիք ունեն: Մայրս մեր շորերից էր հավաքում, ու ես էլ, հաս-

«ՕԶՄՖԱՄ ՄԲ Հայաստանը»՝ «Ապավեն համայնքներին» 34-ի օգնությամբ Վայոց ձորի տասը համայնքներում իրականացնում է «Աղետների ռիսկերի նվազեցման» ծրագիր, որի նպատակն է բարձրացնել տեղական համայնքների ու ազգային կառույցների պատրաստվածությունը և արագ արձագանքելու ունակությունները բնական աղետների ժամանակ: Այս ծրագիրը Հայաստանում աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի բաղկացուցիչ մասն է:



Լիլիթ Քոչինյան

Խաղաղության բանաձև

Նրա անունը Սուս է...



Սուսն մոր՝ Ջամիրայի հետ

Սուսն հայ մայրերի տոկոսությունն ու կամքը խորհրդանշող անուն է... 20 տարեկան Սուս Բալասանյանը ծյուրոյի ԼԳՀ և Հայաստանի չեմպիոն է, ինչպես նաև սամբոյի Հայաստանի եռակի չեմպիոն: Սակայն այս համեստ և համակրելի արցախցի աղջնակի համար սամբոն այնքան էլ լուրջ զբաղմունք չէր մասին հիշատակելու համար, նրա համար գոյություն ունի միայն մարտարվեստի մեկ տեսակ՝ ծյուրոն... Եվ քանի որ այն արվեստ է, ապա պետք է անսպասելի գեղեցիկ լինի, համոզված է Սուսն, որը սեփական օրինակով ապացուցել է, որ ծյուրոն ամենակին է տղամարդկանց մենաշնորհը չէ:

Կրկնապարհ: 41-ին հարազատ գյուղում ոչ մի տղամարդ չէր մնացել, բոլորը ռազմաճակատում էին, և Ռոզան իր համագյուղացի կանանց պես աշխատում էր կոլխոզում կրեով պատերազմի դժվարություններն ու զրկանքները քաղց, ցուրտ, ավերածություն... Գուցե հենց այդ կոփածությունն օգնեց նրան հետագայում Լրցախայն գոյամարտում: Էլ ո՞վ կարող էր, վտանգն անտեսելով, գինվորներին անտառ ուտելիք հասցնել, իհարկե Ռոզան: Երբ երկու որդիները կռվում էին հանուն հարազատ Դարաբաղի, մեկը զրկվեց ձեռքից, իսկ երկրորդը կոնտուզիա ստացավ և ոտքից վիրավորվեց: Սակայն Ռոզան լավատես էր, սասն էր. «Պատերազմում գաթա չեն բաժանում»: Ու այսօր, երբ ինչ-որ մեկը տրտմունք է մի բանի պակասից, Ռոզա տառը սաստում է. «Ամեն օրվա հաց ունեք, երկրում խաղաղություն է, հերիք է: Ուրիշ բան պետք չէ: Մնացածը աշխատենք, կլինի...»

Գուցե Ռոզայից, որը երբեք չէր ընկրկում կյանքի դժվարությունների առաջ, նրա դստերը՝ Ջամիրային (Սուսի մորը) փոխանցվեց այն ուժը, որ օգնեց նրան ոտքի կանգնեցնելու չորս զավակներին, չնայած պատերազմին և անձնական ողբերգությանը... Երկրորդ որդու թաղման օրը, որը 3,5 տարեկանում մահացավ արյան քաղցկեղից, Ջամիրան զմայ ծննդատուն մյուս որդուն ունենալու: Այսօր նա պատմում է, թե ինքն ու իր սիրած ամուսինը Գրիգորը, ինչ նվիրումով, արյուն-քրտինքով են կառուցել իրենց տունը իրենց իսկ ձեռքով իրենց ու իրենց ընտանիքի ուրախության համար: Մտածում էին, թե արդեն բավական է, որդի ունեցել են, տունը կառուցել, ծառ տնկել: Սակայն եղավ 88-ի երկրաշարժը, և

Գրիգորն ասաց. «Պետք է երեխա ունենալ: Գիշեր անց Կարենը է 10-ից պակաս երեխա չունենալ»: 1989-ին Ջամիրան ունեցավ Գրիգորին, իսկ 90-ին Սուսին: Իսկ հետո պատերազմը բոլոր ծրագրերը տակնուվրա արեց... Գրիգորը նետվեց հայրենի Դարաբաղը պաշտպանելու. ռազմական գործողությունների առաջին իսկ օրից ձեռքն առավ գնեքը ու զննաց... Մի քանի անգամ վիրավորվեց. Ջամիրան ասում է, որ «ինչ մեղքս թաքցնեմ, ուրախանում էի, երբ վիրավորվում էր, ուրեմն տալիս կմնար... Իսկ նա հաջորդ առավոտ նվաճում էր և մորից կռիվ: Ասում էր՝ ես արդեն չորս երեխա ունեմ, իսկ էնտեղ երիտասարդներ են. մեռնելու հերթը նրանցը չէ»: Վախենում էր Ջամիրան մի փոքր վախենում էր: Գուցե դրա համար էլ նա Ռոզայի աղջիկն է, որ չկասկածի. «Ինչի՞ց վախենան: Ես գիտեմ, որ կհաղթեմ»...

Հաղթանակ... Այս բանն այսօր Ջամիրայի փոքր դստեր Սուսի համար առանձնակի ու միայն խաղաղ իմաստ է ձեռք բերել: «Պետք է կարողանալ պարտվել հաղթանակը գնահատելու համար», - ասում է Սուսն: Բացելով ԼԳՀ-ում ծյուրոյի կանանց էջը նա կարծում է, որ կյանքում ուժը գլխավորը չէ: Մայրը պատմում է, որ բոլորը մի փոքր վախենում են փոքր դստերից, բայց ոչ թե ֆիզիկական ուժի պատճառով, այլ բնավորության. նա միշտ է անձնուրեք միայն արդարություն մարտիկ է:

Այսօր Ռոզայի նման համարձակ, Ջամիրայի նման կենսունակ և անկախ Լրցախի տարեկից Սուսն երազում է 2012 թ. օլիմպիական խաղերին մասնակցելու և նորանոր մարզական հաղթանակների մասին: Ու ոչ ոք չի կասկածում, որ այդպես էլ կլինի: Քանի որ թե մյուս աղջիկներին օժիտ են հասնում մասնիններ ու ապարանջաններ, ապա նրան ժառանգություն է հասել ուրիշ ուսկի՝ բնավորությունը և հաղթանակները...

Կարինե Օհանյան

Ճակատագրեր

«Ընկել էի դռնեղուռ, որ երեխաներս սովից չմեռնեն»

Կոտայքի մարզի Գողթ գյուղը հանրապետության ամենաաղքատ բնակավայրերից է: 570 տնտեսություն ունեցող գյուղում հարուստներ գրեթե չկան: Գյուղացիներն իրենց ապրելակերպը բնութագրում են ոչ թե աղքատ, այլ ծայրահեղ աղքատ: Գյուղի տղամարդիկ բռնել են խոպանի ճանապարհն ու մեկնել Ռուսաստան: Տղամարդիկ Գողթում հայտնվում են տարվա մեջ երկու անգամ՝ մոր տարվա նախաշեմին կամ էլ օգոստոսին:

Այստեղ արդեն վաղուց հող փորելը, այգի քրելը, ծառ կտրելը համարվում են կնոջ գործ: Կանանց մեծ մասը չիր ու գաթա է պատրաստում ու հարևան Գեղարդ գյուղի եկեղեցու մոտ վաճառում: Երբեք 4-5 հազար դրամ վաստակելու համար կանայք այստեղ կանգնում են առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 9-ը:

Սուսն էլ գողթեցի այլ կանանց պես իր ապրուստը վաստակում է չիր վաճառելով: Թեպետ 40 տարեկան էլ չկա, սակայն, ինքն էլ է ասում, որ իր տարիքից շատ ավելի մեծ է երևում: «Լավ կյանքից չէ, որ այս տեսքն ունեն»,- ասում է նա:

Սուսն, սկեսուրն ու դուստրերն ապրում են փոքրիկ, հողաչեն տանը, որի մի մասը փլվել է: Պատերը ճաքել են, տանիքը կաթում է: Տան մի սենյակում են ուտում, քնում, ռաս սովորում: Սուսնի ամուսինը՝ Գեղամը, զոհվել է Արցախյան պատերազմում:

«Իմ կյանքը հեշտ չի ստացվել, ամուսինս զոհվեց, երբ 20 տարեկան էի: Մեծակ, առանց օգնողի երկու երեխա եմ պահել: Երբեմն ուզում էի ինքնասպան լինել, որովհետև էլ ուժ չունեի, չէի կարողանում դիմանալ, բայց հասկանում էի, որ պետք է ապրեմ հանուն աղջիկների: Ընկել եմ դռնեղուռ, լացել, աղաչել, որ կես լիտր կաթ տան, մի տուրակ այլուր, որ երեխաներս սովից չմեռնեն»,- ասում է նա՝ արասափով հիշելով 90-ականների մութ ու ցուրտ տարիները:

70-ամյա տիկին Ալվարդը պատմում է, որ եղել են օրեր, երբ ինքն ու հարսը սոված են մնացել, որ աղջիկներն ուտելու բան ունենան: «Իմ կյանքն ո՞ւմ ա պետք, ոչ ոքի, միմուճար տղաս զննաց զոհվեց, ամուսինս էլ զննաց տղայի հետևից, ու չվերահարձակ, բա ինձ պե՞տք ա ես կյանքը: Միակ դարդս ես խեղճ երեխեքն են, որ օգնող ձեռք չունեն, մնացել են անտեր»,- հեկեկալով ասում է տարեց կինը:

Կարճ ժամանակ անց Սուսն հասկացավ, որ լացը չի փրկի. երեխաներին հարկավոր են սնունդ, հագուստ: «Հասկացա, որ ինձ ոչ ոք չի օգնի, բայց իմ երեխաներն իմ օգնության կարիքն ունեն»:

Սկզբում Սուսն քաղաք էր գալիս և ունևոր մարդկանց տներում մաքրություն անում, ճաշ եփում, վաճառ անում: «Հաճախ աշխատեցնում էին ու զուամարդ չէին տալիս: Մի երկու անգամ ծեծելով դուրս են վնդռել: Եղած զուամարդ էլ տալիս էի տրանսպորտի»,- ասում է նա: Իսկ այլ աշխատանք Սուսն չէր կարող կատարել: 16 տարեկան էր, երբ ամուսնացավ: «Անգամ չհասցրի դպրոցն ավարտել: Առանց կրթության ո՞նց կարող էի աշխատանք գտնել, այն էլ էն տարիներին, երբ մարդկանց կրճատում էին»:

Վերջին տարիներին Սուսն «իմ-նական աշխատանք» է ճարել: Ամռանը Ալվարդ տատի հետ այգին է մշակում, ծառերը ջրում, հողը փորում, աշմանը չիր են պատրաստում ու վաճառում: «Աղջիկները գաթա են թխում, ես ու մասնակ է չիր ենք սարքում: Աշխատանքը ծանր է, ամբողջ օրը դժվար է քանո, անձրևի ու արևի տակ կանգնել դրսում ու չիր ծախել, բայց ուրիշ ճար չկա»,- պատմում է նա:

Իր աշխատանքում Սուսն այնքան է հմտացել, որ անգամ հարևան գյուղերից են գալիս նրա չիրն ու անալին գնելու: «Էլի գոհ եմ Աստուծոց, որ կարող եմ երեխաներիս պահել: Իմ կյանքն էսպես անցավ, բան չհասկացա, ուզում եմ աղջիկներին կյանքով ուրախանալ: Դրա համար ստիպում եմ, որ կավ սովորեն, մարդ դառնան, որ իմ նման պատի տակ կանգնած չիր չծախեն»...

Հասմիկ Հարությունյան

«Երբ գյուղ էի գնում, Ռոզա տատս իսկականից ուրախանում էր, բայց ընդամենը երկու անգամ իմ գալու օրը և մեկնելու օրը, այնքան չարածի էի, ոնց որ վայրի կատու լինեի»...

Օտար, ամայի ճամփերի վրա

Նոյեմ փապը երեք անգամ «փախստական» էր դարձել, բայց երբեք չէր հուսահատվում



Ամեն անգամ «Դէլ յաման»-ի թախտոտ հնչյունները լսելով Լատուրա Զարոյանյանը հիշում է մորը՝ Նոյեմին, ում ճակատագիրը այնքան համահունչ էր այս երգի բառերին: Իր երկար կյանքի ընթացքում, իսկ Նոյեմը, ի հեծունս բոլոր դժբախտությունների, ապրեց 89 տարի, նա մի քանի անգամ ստիպված լքել է իր հարազատ վայրերը՝ երեք անգամ բռնելով գաղթի ճամփան...

Առաջին անգամ նրա ճակատագրին խանգարվեց 1915-ի ողբերգությունը: Փոքրիկ Նոյեմն ընդամենը երկու տարեկան էր, երբ Կարսի նահանգի գյուղերից մեկում ապրող իրենց բազմադարյան ընտանիքի համար ավարտվեց խաղաղ կյանքը: Ամենափոքրիկներին սովից փրկելու համար ծնողները նրանց հանձնեցին նորաբաց ամերիկյան որբանոց: Մանկության ամենավաղ հիշողությունը պարոն Բրաունն էր, պարոն Բրաունը, ինչպես նրան կոչում էր Նոյեմը, միշտ մի համեղ բանով հյուրասիրում էր և քնքշորեն շոյում փոքրիկների գլուխը:

Երբ Կարսում իրավիճակը սրվեց, և գյուղ մտան ենիջերիները, հայրը երեխաների հետ (Նոյեմի մայրն մահացել էր) ստիպված էր փախչել: Ամենահավերժ այն էր, որ այդ պահին չկարողացան իրենց հետ տանել կույր տատին, իսկ երբ մեծ եղբայրը հետ վերադարձավ, տատիկն արդեն անշունչ ընկած էր... Զարոյանյանների ընտանիքը ճամփա բռնեց մոտակա Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի): Սուվի տարիներ էին, ու Նոյեմին հերթական անգամ հանձնեցին որբանոց: Ի տարբերություն ամերիկյանի, Ալեքսանդրապոլի մանկատան երեխաները գրեթե միշտ սոված էին: Նա և մորաքրոջ աղջիկը հազիվ էին կարողանում մի կտոր սև հաց քաքցել լաթի մեջ բակում, իսկ

հետո ուտել: Սակայն ավելի հաճախ նրանք քաքցածը տալիս էին մորաքրոջ թուլակազմ տղային՝ Գեղամին: Աղջիկները նրա համար զուլպա էին գործում, թելը հյուսում էին ներքնակից գաղտնի դուրս քաշած բամբակից: Զետագայում «նվազ» Գեղամը դարձավ ընտանիքի հպարտությունը. մեծացավ, սովորեց, կուսակցական աշխատանքի անցավ, բարձր պաշտոնի հասավ:

Սկսվեց հայ-թուրքական պատերազմը, և այս անգամ Զայաստանի առաջին հանրապետության տարածք ներխուժած թուրքական բանակի հանդեպ վախը ստիպեց Նոյեմի ընտանիքին նորից փախչել: Երկար դեգերումներից հետո ճակատագիրը նրանց նետեց արդյունաբերական Բաքու, որտեղ նրանք աշխատանք գտնելու հույս ունեին: Նոյեմն ընդամենը 15 տարեկան էր, երբ աղջիկ ուզելու եկան հայրենակիցները՝ Կարսի նահանգի Բաշգյուլից 23 տարեկան Զմայակը: Նա միանգամից դուր եկավ Նոյեմին: Իր հարսանիքը չէր հիշում: Ու արդյոք եղե՞լ էր: Սկզբում երիտասարդներն ապրում էին ծայրամասում, որտեղ էլ ծնվեցին եղբայրը՝ Ռաֆայելը, Եվգենյան, ժասմենը և փոքրիկ Լատուրան, իսկ մի քանի տարուց տեղափոխվեցին Բաքվի կենտրոն: Պերվոմայսկայա 1 փողոցի իրենց երեքսենյականոց ընդարձակ բնակարանի բանալիները մինչև հիմա էլ Լատուրա Զմայակովնայի մոտ են: Այնտեղ նա, երկու քույրերն ու եղբայրը մեծացան և ոտքի կանգնեցին. նրանք բոլորն էլ բարձրագույն կրթություն ստացան:

Բաքվում, հատկապես պատերազմի տարիներին, սով էր: Սակայն Նոյեմն անասելի ջանքեր էր գործադրում, որ ընտանիքը քաղցի չմատնվի: Նա հարևանուհու հետ լավաշ ու հաց էր թխում: Ամռանը փրկում էին այգին ու բանջարանոցը, որը նա ուներ արվարձանում. աճեցրած բանջարեղենը հասցնում էր քաղաք ու վաճառում: Զմռանը մի ճար էր գտնում հայրը, աշխատանքի բերումով լինում էր շրջաններում, որտեղից երեխաների համար «վիտամիններ» էր բերում: Սակայն ճակատագիրը նորից դադարեց ժպտալուց, այդպես էլ չհաջողվեց 19 տարեկան Ռաֆիկին մինիմալիստ փրկել: «Մաման այն ժամանակ շատ էր լաց լինում»,- հիշում է Լատուրա Զմայակովնան: - Սակայն չհանձնվեց. 38 տարեկանում ամուսնուց նորից որդի պարգևեց: Անունը դրեց Ռաֆայել, բայց մենք Ռոմա էինք ասում»: Ավաղ, հորն ու որդուն վիճակված չէր երկար շփվել: Ռոման ընդամենը 11 տարեկան էր, երբ հայրը դժբախտ պատահարի գոհ դարձավ:

Բաքվում ապրած 65 տարիների ընթացքում Նոյեմը շատ բան էր տեսել, սակայն երբեք չէր մտածում, որ արդեն տարեց հասակում նորից ստիպված կլինի փախստական դառնալ, երրորդ անգամ... 88-ին նրանց տան դուռը հանկարծ բախեց ժողովրդական ծակատի ակտիվիստ դարձած հարևանը: Նրան չհաջողվեց բնակարան ներխուժել, զանգահարեցին միլիցիա...

«Երկար ժամանակ Բաքվում ծավալվող իրադարձությունները մենք լրջորեն չէինք ընդունում. մեզ թվում էր՝ ուր որ է ամեն ինչ կկար-

գավորվի: Ու կապերն առաջվա պես՝ հյուրերը ընդունելով, հյուրասիրելով մայրիկի կարկանդակներով և ֆիրմային փախվալով»,- պատմում է Լատուրան, և միայն այդ հիշողությունից նրա աչքերին արցունքներ են հայտնվում: - Մեզնից ոչ ոք չի կարող մամայի սման փախվալ պես թխել: Նա անգերազանց վարպետ էր, ամեն գործի մեջ հոգի էր դնում: Ու բացի այդ, չափազանց բարի անձնավորություն էր. և այդպիսին մնաց մինչև իր կյանքի վերջը, ճակատագրի հարվածները չկարողացան նրան չարացնել...»

Ավաղ, առաջվա պես ապրել չհաջողվեց: 1989-ի վերջին, հունվարի ջարդերի համարյա նախօրեին, Զարոյանյանները, գիտակցելով, որ Բաքվում մնալը վտանգավոր է, համարձակվեցին հերթական տեղափոխության: Լատուրան այն ժամանակ 44 տարեկան էր, մայրը՝ Նոյեմը՝ 75: Լատուրայի ամուսինը մեկնել էր Ռուսաստան՝ ընտանիքի հետագա գոյության տարբերակներ փնտրելու, սակայն շուտով, ապրումներին չհիմնադրվելով, մահացավ: Իսկ Լատուրան 15-ամյա դստեր Ռեզինայի, մոր, սկեպտիկ ու չամուսնացած քրոջ հետ ուղղվեց Երևան: Լատուրան մինչ օրս երախտապարտ է աղբյուրներից գործընկերներին, որոնք օգնեցին նրանց շուտ մեկնել Բաքվից:

Երևանում փախստականներին օբլան տվեց Նոյեմի ավագ դուստրը, որը Զայաստանում էր ամուսնացել: Երկար տարիների ընթացքում կուտակածից հաջողվել էր վերցնել միայն խնայարանի գրքուկները, սակայն Սովետական Միության փլուզումից հետո դրանք այդպես էլ չհաջողվեց կանխիկացնել, իսկ առանց անհրաժեշտ գումարի երևանում բնակարան գնել չստացվեց: Այդպես էլ մնացին ժամանակավոր կացարանում (ինչպես նրանց թվում էր սկզբում)՝ հատուկ դպրոցներից մեկի մասնաշենքի՝ տարրական պայմաններից զուրկ փոքրիկ սենյակում: Ամենահավերժը այն տարիներն էին, երբ Նոյեմ տատը վերջնականապես կուրացավ ու դրսուս սամահանգույց ծառայող շինություն մեծ դժվարությամբ էր հասնում:

Այսօր՝ երկու տասնամյակ անց, Լատուրա Զմայակովնան քրոջ, դստեր և թոռան հետ ապրում է նույն դպրոցի մասնաշենքում: Ու թեպետ մոր մահից հետո նրանց ավելի մեծ սենյակ տրամադրեցին, կանայք դեռ երազում են տաք ջրի և տան ջերմության մասին: Գինել և գրել են տարբեր աշխատանքներ, սակայն բնակարանի հարցը այդպես էլ չի լուծվում:

Ի հեծունս բոլոր դժվարությունների՝ իր 67 տարեկանում Լատուրա Զմայակովնան եռանդուն է և «հանրակացարանի» հարևանների շրջանում ակտիվիստի անուն է հանել: Ու թեպետ վերջին շրջանում սնունդի բացակասը հանրահանուր գնաճը ստիպում է հերթական անգամ գոտիները ձգել, իսկ տատիկի բաղարարատոմսով «ֆիրմային փախվալով» մեծ շքեղություն է դարձել նրանց համար, այնուամենայնիվ Լատուրայի սենյակը միշտ լի է հյուրերով: Նա ընդունում է բոլորին սրտանց՝ հյուրասիրելով այն, ինչ ունի... Այդպես է միշտ արել երբեք չհուսահատվող Նոյեմ տատը...

Ասյա Ծատուրովա

Առաքելություն

Հավատանք մեր ուժերին, գնահատենք մեր արժեքը

Ես Նաիրա Զայաստանյանն եմ, ապրում եմ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Մասնագիտությամբ իրավաբան եմ և աշխատում եմ «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ Սիսիանի քաղաքացիական կենտրոնում:

Երբ 2009-ին աշխատանքի ընդունվեցի, ամուսինս դեմ էր իմ աշխատելուն: Պատճառներից մեկը երկու երեխաներս էին, որոնք փոքր էին՝ 4 և 8 տարեկան, ու բացի այդ էլ, հայ տղամարդու արժանապատվությունը թույլ չի տալիս, որ կինն աշխատի: Ես էլ իմ մեջ զայրանում էի, չէի կարողանում հանդուրժել, ափսոսում էի իմաստիտուտում ստացած գիտելիքներս, որ պիտի կորցնեի, չօգտագործեի: Ստացվում է՝ պետք է սպանել մասնագիտությանս մեջ կայանալու ձգտումս հանուն իմ ընտանիքի անուրության, հաճումս ամուսնուս ավանդական գաղափարների... Այս թեմայի շուրջ գրեթե ամեն օր վեճերի մեջ էի ամուսնուս հետ:

Այնուամենայնիվ շարունակեցի աշխատանքի գնալ: Կազմակերպություն կողմից անցկացվող սեմինարների թեմաները ինձ շատ հոգեհարազատ էին՝ մարդու իրավունքներ, կանանց խտրականություն, գենդերային կարծրատիպեր... Յուրաքանչյուր դասընթացից հետո դառնում էի ավելի ինքնավար, ավելի ինքնավարապես ու զինվում էի նոր գիտելիքներով: Ու այդ վստահությունն էր, որ օգնեց ինձ ամուսնուս համոզել, չկտրվել, չհանաճել իմ վաղեմի երազանքից: Կարողացա միաժամանակ զբաղվել սիրած գործով ու գումար վաստակել, լինել լավ տնտեսուհի, հոգատար մայր ու սիրված կին: Կարծում եմ՝ այս ամենի համադրումն է կնոջ առաքելությունը...

Գործի բերումով շատ եմ շփվում տարբեր մարդկանց հետ, որոնք կենտրոն են հաճախում անվճար խորհրդատվություն ստանալու նպատակով: Մեծ ուշադրություն եմ դարձնում կանանց խնդիրներին, հատկապես, երբ խոսքը վերաբերում է նրանց նկատմամբ խտրականության: Սրտի ցավ եմ ապրում, երբ տեսնում եմ, թե ինչպես մեր կանայք, որոնցից շատերը բարձրագույն կրթություն են ստացել կամ օժտված են տարբեր շնորհքներով, կարծրատիպերի գերի են դառնում ու կորցնում իրական հնարավորություններ՝ աշխատելու, ստեղծելու, հասարակության մեջ իրենց տեղն ունենալու, կայանալու որպես անհատներ:

Միշտ կոչ եմ անում նրանց՝ հավատացե՛ք ձեր ուժերին, գնահատե՛ք ձեր իրական արժեքը և մի դարձե՛ք կործանարար կարծրատիպերի զոհի: Գրի առավ Լիլիթ Ենոքյանը

Դիրքորոշում


Սպասված ու սիրված

Դեռևս մորս արգանդում՝ ես սիրված եմ եղել: Մենք չորս երեխա ենք, ես առաջնեկն եմ: Ծնողներիս համար միևնույն էր՝ աղջիկ կլինեմ, թե տղա: Դեռ չծնված՝ նրանք սիրում ու սպասում էին ինձ: Կյանքիս բոլոր օրերին ինձ ուղեկցել է ծնողներիս սերը:

Դեռ մանկուց շատ եմ լսել այն մասին, որ մարդիկ, գտնվելով սոցիալական ծանր վիճակում, սպանել են իրենց ծնված կամ դեռևս չծնված երեխային. իմ կարծիքով՝ տարբերություն չկա, երկու դեպքում էլ մանկասպանություն է: Դրա համար էլ ինձ այդ բոլոր պատմությունները մոռացված էին թվում: Ժամանակի ընթացքում հասկացա, որ մանկ պատմությունների հերոսներից մեկը մեր հարևանն է, մյուսը՝ մեր բարեկամը, երրորդը՝ թերևս տատիկս:

Իր մասին տատիկս գրեթե ոչինչ չէր պատմում, ուղղակի ասում էր, որ բոլորն էլ դիմել են այդ քայլին: Մի անգամ պատմեց, թե ինչպես է հղի ժամանակ ծանր քարեր տեղափոխել, որ երեխային կորցնի, որովհետև երեք աղջիկ ուներ, չորրորդն արդեն կրկնակի ավելորդություն էր: Բայց, բարեբախտաբար, երեխան առողջ է ծնվում և հուրախություն բոլորի՝ տղա: Այդ տղան իմ հայրն է: Ինչևէ, ես տատիկիս շատ եմ սիրում...

Ասում են՝ իրականությունն այսպիսին էր ու այս իրականությունն էր պարտադրում իր կանոնները բոլորին: Տատիկիս մեջ կար մի խուլ



Ընթրստություն: Նա համաձայն չէր խաղի այս կանոններին, բայց ի՞նչ կարող էր անել. «Բոլորն

այսպես են անում, բոլորն այնպես են անում»: Ռոզոնիկ ինքնաարդարացում:

Այս խնդիրն ամեն կին մախ իր մեջ պետք է հաղթահարի: Երբ կինն ինքն իր մեջ չի հարմարվում մանկասպանության գաղափարին, երբ գիտակցում է, որ «մայր» նշանակում է կյանք տվող, ոչ թե կյանք խլող, այդ ժամանակ իրականության մեջ՝ մանավանդ ժամանակակից պայմաններում շատ միջոցներ կգտնվեն մանկասպանությունից խուսափելու:

...Մայրս երրորդ երեխային էր սպասում: Տատիկս առաջինն իմացավ, որ երրորդ աղջիկն է ծնվելու: Թաքցրեց բոլորից երեխայի անցանկալի լինելու «փաստը»: Որոշ ժամանակ անց մորս գումար տվեցին, որ գնա նորից ստուգվի, ու եթե աղջիկ լինի՝ հեռացնի երեխային: Մայրս բժշկից գնաց: Բարեբախտաբար, այդ օրը նա աշխատանքի չէր եկել: Մայրս թեթևացած դուրս եկավ հիվանդանոցից: Նա իր ծեղքի մեջ ամուր պահել էր դժվարությամբ վաստակած այդ գումարը: Բայց այդ ամուր ու խղճուկ դրամն այրում էր նրա ծեղքը: Նա մտավ առաջին իսկ պատահած խանութը և աճրող գումարը տալով՝ գնեց մի փոքրիկ ու գեղեցիկ պայուսակ: Եվ հանգիստ խղճով վերադարձավ տուն: Նա գիտեր, որ այլևս չի ունենա այդ խղճուկ փողը, և ուրախ էր դառ համար:

Ծնվեց փոքր քույրս: Նա շատ գեղեցիկ էր, պայուսակից էլ գեղեցիկ: 4եց տարեկան էի ու

շատ էի ուզում եղբայր ունենալ, դա իմ ամենամեծ երազանքն էր: Մինչ քրոջս տեսնելը ես այնքան էի լացել, այնպիսի չար խոսքեր էի ասել նրա մասին, որ մինչև հիմա էլ չեմ հասկանում, թե այդքան չարություն իմ մեջ որտեղից: Ընդամենը վեց տարեկան էի ու մտածում էի մեծահասակների պես. «Աղջիկ երեխա մեզ պետք չէ»: Երբ տեսա քրոջս... Ախր, նա իսկապես շատ գեղեցիկ էր, ամենագեղեցիկն էր: Դեռ ես եղբայր ունեցա: Ափսոս, որ չորրորդ քույրիկ չունեմ...

Ես սպասված ու սիրված եմ եղել ծնողներիս համար: Աշխարհի բոլոր երեխաներին ցանկանում եմ, որ նրանք էլ սպասված ու սիրված լինեն: Դուրսով եմ, որ չա՛տ երեխաներ կունենան: Միշտ ցանկացել եմ տատը երեխա ունենալ: Բոլորին էլ դեռ չծնված սիրում եմ: Թեկուզ տասնմեկը...

Աշխեն Պետրոսյան
«Դուստլի ծեղքեր» խմբի անդամ,
p. իսրայել

Oxfam logo and text: Հատուկ թողարկումը պատրաստվել է OXFAM-ի կողմից հասարակական գրասենյակի աջակցությամբ. հմրագիր՝ Թամարա Գովաթյանյան էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com Տպագրանակ՝ 5000